

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

ԽԱԶԱՏՐՅԱՆ Ժ. Դ., ՀԱԿՈՒՅԱՆ Ն. Ֆ.

Հելլենիստական դարաշրջանի սկզբին, մ.թ.ա. III դարում սկսված ուրբանիզացիան, քաղաքաշինությունը (Երվանդաշատ, Երվանդակերտ, Շամուշատ-Սամոկերտ, Արշամաշատ, Եփրատի վրայի Արսամեա, Նյումփայոսի վրայի Արսամեա) Արտաշիայան հարստության ժամանակ նոր թափով շարունակվեցին:

Արտաշես Առաջինը (մ.թ.ա. 189-160 թթ.), լինելով պետական խոշոր գործիչ, ճիշտ ըմբռնելով ժամանակի պահանջները, իր արտաքին ու ներքին ակտիվ քաղաքականության շնորհիվ կարողացավ վերամիավորել հայկական հողերը, անցկացնել վարչատնտեսական և ռազմական մի շարք կարևոր բարեփոխումներ: Արտաշեսն իր և հոր անունով հիմնադրել է ութ քաղաք, այդ թվում՝ Արտաշատ մայրաքաղաքը, որի մասին վկայում են Ստրաբոնը<sup>1</sup>, Պլուտարքոսը<sup>2</sup> և Մովսես Խորենացին<sup>3</sup>:

Մ.թ.ա. III-II դդ. քաղաքական, տնտեսական ու մշակութային վերելքը Հայաստանի հզորացման հիմք դարձան: Ուստի, պատահական չէ, որ Տիգրան Երկրորդի (մ.թ.ա. 95-55 թթ.) օրոք Հայաստանը դուրս եկավ միջազգային լայն ասպարեզ և մ.թ.ա. I դ. առաջին քառորդին արդեն Առաջավոր Ասիայի քաղաքական հզոր ուժերից մեկն էր: Հայաստանը դարձավ հելլենիստական մի մեծ պետության միջուկը և տիրացավ հսկայական հարստությունների: Տիգրանը, հետևելով հելլենիստական ավանդույթներին, Ադանիքում կառուցեց նորաստեղծ կայսրության մայրաքաղաք Տիգրանակերտը (մ.թ.ա. 80-ական թվականների վերջերին), ինչպես նաև Տիգրանակերտ անունով քաղաքներ՝ Արցախում և Ուտիքում, Տիգրանավանը՝ Գողթնում<sup>4</sup>:

Տիգրանի կառուցած Տիգրանակերտները, բացի Արցախի Տիգրանակերտից<sup>5</sup>, առ այսօր տեղորոշված չեն: Մայրաքաղաք Տիգրանակերտի տեղը շատ աղբյուրներ ցույց են տալիս Տիգրիսի վերին հոսանքի շրջանում, մի մասը նշում է Տիգրիսից հյուսիս, մյուսը՝ հա-

<sup>1</sup> **Տրաբոն.** *Գեոգրաֆիա* *в 17 книгах, XI, 14, 6* (пер. и комментарии Стратановского Г. А.), Л., 1964.

<sup>2</sup> **Քլուտարք.** *Лукул. XXXI, 5. Сравнительные жизнеописания в трех томах, т. II* (пер. Аверинцева С. С.), М., 1963.

<sup>3</sup> **Մովսես Խորենացի.** *Պատմություն Հայոց, Քննական բնագիրը և ներածությունը Մ. Արեղյանի և Ս. Հարությունյանի, Ե., 1991, II, 49:*

<sup>4</sup> **Երեմյան Ս. Դ.** *Развитие городов и городской жизни в древней Армении (Вестник древней истории, 1953, N 3, с. 14-16), Հայ ժողովրդի պատմություն (այսուհետև՝ ՀԺՊ), հ. I, Ե., 1971, էջ 574:*

<sup>5</sup> **Պետրոսյան Հ., Խաչատրյան Ժ., Փիլիպոսյան Ա., Սաֆարյան Վ.,** *Արցախի Տիգրանակերտի ենթադրվող տարածքի և շրջապատի հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները (Լեոնային Ղարաբաղի հանրապետություն, անցյալը, ներկան և ապագան. միջազգային գիտաժողով, Ե., 2006, էջ 113-115):*

րավ: Թեև ընդունված է Լեման Հաուպտի<sup>6</sup> և Վալդեման Բելքի տեսակետը, որոնք Տիգրանակերտը տեղադրում են Տիգրիսից հյուսիս, ձախակողմյան վտակ Նիկեփորիոնի (Ֆարկին սու) ափին, Նփրկերտի (ներկայիս Ֆարկին քաղաքի) տեղում<sup>7</sup>, սակայն մինչև օրս վեճերը շարունակվում են: Վերջին աշխատանքը Հայկ Հակոբյանին<sup>8</sup> է, որտեղ հեղինակը բարեխղճորեն հավաքել ու քննարկել է նախորդ ուսումնասիրողների աշխատանքները: Պատճառն այն է, որ վիճահարույց հարցի վերաբերյալ իրենց տեսակետները հայտնող գիտնականները հիմնականում հենվում են աղբյուրների՝ իրար հակասող տեղեկությունների վրա: Հրանտ Արմենը կարծում է, որ հնագետները պետք է հավանական վայրերի պեղումների արդյունքները քննարկեն աղբյուրագիտական նյութերի հետ համատեղ<sup>9</sup>:

Տիգրանակերտ մայրաքաղաքի վերաբերյալ որոշ տեղեկություններ են հաղորդում հունա-հռոմեական աղբյուրները՝ կապված Լուկուլլոսի կողմից Տիգրանակերտի շրջապատման և գրավման հետ: Սակայն, անկախ քաղաքի տեղադրությունից, փորձենք աղբյուրների տեղեկությունների հիման վրա վերականգնել Տիգրանակերտի ճարտարապետական տեսքը: Պլինիոս Ավագի համաձայն, Տիգրանակերտը կառուցված է եղել բլրի վրա<sup>10</sup> (հավանաբար՝ միջնաբերդ): Քաղաքաշինության կարևորագույն օղակներից են պաշտպանական կառույցները, որոնք արտահայտում են տվյալ շրջանի ճարտարապետության ռազմարվեստի նվաճումները և պետության տնտեսական ու քաղաքական վիճակը: Հզոր պաշտպանական համակարգեր ունեցող քաղաքները, լավ կազմակերպված զորքի հետ միասին, երկրի անկախության գրավականն էին: Ուստի, պաշտպանական համակարգը պետք է համապատասխաներ զարգացող պոլիորկետիկայի (քաղաքներ պաշարելու արվեստի) պահանջներին և մշտապես լիներ պատրաստ վիճակում: Ապպիանոսը<sup>11</sup> վկայում է, որ Տիգրանակերտն ուներ 50 կանգուն (25-26 մ) բարձրությամբ պարիսպներ (հավանաբար՝ աշտարակները), որոնք այնքան լայն են եղել, որ դրանց մեջ կային ձիերի բազմաթիվ ախոռներ և պահեստներ:

<sup>6</sup> **Յարոքիսենան Բ. Հ.**, *Տիգրանակերտ մայրաքաղաքի տեղադրության հարցի շուրջ (Հայկազեան հայագիտական հանդես, Պէրոթ, 1994, էջ 11-40)*; **Chaumont M. L.** *Tigranocerte: daneés du problème état des recherches (Revue des Arménienne 16 (1982), p. 89-110)*; **Chaumont M. L.** *Quelques notes, concernant Tigranocerte*, *Revue des Armenienne 21 (1988-1989), p. 233-249*; **Hewsen R. H.** *Introduction to Armenian Historical Geography: IV. The Boundaris of Artaxiad Armenia*, *Revue d'Etudes Arménienne 19(1985), p. 55-84*; **Syme, R. (sir)**, *Tigranocerta: A Problem Misconceived, in: Roman Papers 4 (1988), New York, p. 245-251*, **Sinclair T.**, *The Site of Tigranocerta I (Revue des Etudes Arménienne, 25(1994-1995), p. 183-254)*.

<sup>7</sup> **Lehmann-Haupt C. F.** *Armenien einst und jetzt, I, Berlin, 1910, S. 381-425, 501-523.*

<sup>8</sup> **Հակոբյան Հ.**, *Հին Հայաստանի մայրաքաղաք Տիգրանակերտը [Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 2007, N 3, էջ 3-29]*:

<sup>9</sup> **Արմեն Հ.**, *Մեծն Տիգրան, Կահիրե, 1957, էջ 235-240:*

<sup>10</sup> **Գայոս Պլինիոս (Ավագ) Սեկունդոս**, *Բնական պատմություն, գիրք VI, X [Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա (այսուհետև՝ ՀԺՊՔ), հ. I, Ե., 1981, էջ 365]*:

<sup>11</sup> **Ապպիանոս**, *XII, 84 (ՀԺՊՔ, էջ 258)*:

Այսինքն, Տիգրանակերտի ռազմավարական դիրքը շատ հարմար է եղել, ունեցել է պաշտպանական հզոր համակարգ, ամուր միջնաբերդ, որի շնորհիվ քաղաքը կարողացավ դիմանալ Լուկուլլոսի երկարատև պաշարմանը և միայն հինգ ամիս հետո, հույների դավաճանության պատճառով, հռոմեացիներին հաջողվեց մ.թ.ա. 69 թ. գրավել, կողոպտել ու քարուքանդ անել այն:

Տիգրանը Մեծը քաղաքի արվարձանում կառուցել էր պալատ՝ ընդարձակ զբոսայգիներով, որսատեղերով և լճերով: Մերձակայքում հիմնել էր նաև մի հզոր բերդ<sup>12</sup>: Այս վկայությունը թյուրիմացության մեջ է գցել որոշ գիտնականների: Ենթադրվել է, թե Տիգրանակերտը կազմված է եղել բուն քաղաքից և պարսպից դուրս՝ մերձակայքում գտնվող միջնաբերդից (իր պալատական կառույցներով), որն անսովոր երևույթ էր Հայաստանի համար<sup>13</sup>: Քանի որ Հայաստանի բոլոր մայրաքաղաքներում միջնաբերդը եղել է քաղաքի մեջ, ուստի տարբեր բացատրություններ են տրվել, թե այդպես է արվել բնական պայմանների կամ էթնիկական տեսակետից քաղաքը անհուսալի լինելու պատճառով<sup>14</sup>, կամ Տիգրանը վերադարձել է արևելյան, ավելի շուտ՝ աքեմենյան հին ավանդույթներին, և դա համարվել է շեղում հելլենիստական քաղաքաշինության սկզբունքներից<sup>15</sup>:

Տիգրանակերտը համեմատվել է Հին ու Նոր Նիսայի հետ, որտեղ բուն քաղաքի կողքին գտնվում էր թագավորական ամրոց Միհրդատակերտը՝ իր պալատներով, այգիներով, ջրավազաններով, սննդամթերքի պահեստներով, թագավորական տնտեսության ղեկավարության շենքով<sup>16</sup>: Համեմատվել է նաև Արշակունիների ամառային նստավայր Էկբատանի հետ, որից 10 կմ հեռավորության վրա գտնվում էր թագավորական դրյակ Ադրաբանան (որը հրի մատնվեց Տիգրան Մեծի կողմից<sup>17</sup>), Երվանդաշատի մոտ կառուցված Երվանդակերտի, Ալեքսանդրիայի մոտ կառուցված պալատ-ամրոցի և Անտիոքի ու Դաֆնայի հետ<sup>18</sup>:

Տիգրանակերտը, Հայաստանի մայրաքաղաքների նման, քաղաքի ներսում, բլրի վրա ունեցել է անառիկ ամրոց, որտեղ 69 թ., երբ Լուկուլլոսը պաշարեց քաղաքը, գտնվում էին կանանոցն ու զանձերը: Տիգրանը, հասնելով պաշարված Տիգրանակերտ, առաջին հերթին վեց հազարանոց հայկական հեծելազունդ ուղարկեց, որը նետաձգությամբ փակեց հռոմեացիների ճամբարից դուրս գալու ճանա-

<sup>12</sup> *App. Mithr.*, XII, 84 (ՀԺՊԼ, էջ 258):

<sup>13</sup> **Тирация Г. А.** *Города Армении эллинистического времени в свете археологических исследований* (Вестник древней истории, 1979, N 2, с. 172).

<sup>14</sup> **Арутюнян В. М.** *К вопросу о градостроительной культуре древней Армении* (ՀՄՄՀ ԳԱ 88888Տեղեկագիր 99999 /հաւ. գիտ., 1956, N 10, էջ 77).

<sup>15</sup> **Тирация Г. А.**, նշվ. աշխ., էջ 172:

<sup>16</sup> **Кочеленко Г., Акопян А.** *Градостроительство Армении и градостроительство Парфии* (Второй международный симпозиум по армянскому искусству, сб. докладов, т. I, Е., 1978, с. 255).

<sup>17</sup> **Ղանիելյան Է. Լ.**, *Բւիդորը Քարակաղնի 88888Պարթևական կայանները* (ՊԲՀ, 1971, N 4, էջ 173, 179, ծան. 48):

<sup>18</sup> **Тирация Г. А.**, նշվ. աշխ., էջ 172:

պարհը՝ գիշերով դուրս բերելով կանանոցը և ամենարժեքավոր իրերը<sup>19</sup>:

Տիգրանակերտի մերձակա պալատն իր պարտեզներով, այգիներով, որսատեղերով, լճերով ժամանցի վայր էր և կարող էր համեմատվել միայն Դաֆնայի հետ: Պալատից ոչ հեռու կառուցված ամրոցը ոչ մի կապ չուներ դրա հետ, ուստի միջնաբերդ լինել չէր կարող:

Տիգրանակերտի մերձքաղաքային պալատն այգիներով ու որսատեղերով՝ իր նշանակությամբ հիշեցնում է Երվանդի տնկած «Ծը-նընդոց անտառը» և Արտաշատի մոտ Խոսրով Կոտակի հիմնած անտառն ու պալատը. անտառը մերձքաղաքային ժամանցի վայր էր՝ զբոսանքի և որսի սիրահար թագավորի համար<sup>20</sup>:

Հելլենիստական երկրներում նորաստեղծ քաղաքները բնակեցվում էին համաբնակեցման (սինոյկիսմոսի) միջոցով: Նույնը կատարվել է նաև Հայաստանում, դեռևս Երվանդունիների օրոք: Արտաշատ մայրաքաղաքի կապակցությամբ Մովսես Խորենացին նշում է. «Եվ յարուցանե ի քաղաքէն Երուանդայ զգերութիւն Հրէիցն, որ փոխեալ էին անդր յԱրմաւրայ, և նստուցանէ զնոսա յԱրտաշատ»<sup>21</sup>: Տիգրան Երկրորդը նույն կերպ է վարվում, բայց ավելի մեծ ընդգրկումով: Ապախանուր վկայում է, որ հայ ավագանին գույքի բռնագրավման սպառնալիքի տակ տեղափոխվել էր Տիգրանակերտ<sup>22</sup>: Տիգրանը, գիտակցելով քաղաքային բնակչության կարևորությունը երկրի առաջընթացի համար, նվաճված երկրներից՝ Կիլիկիայից, Կապադովկիայից, Միջագետքից, հելլենիստական 12 քաղաքներից<sup>23</sup> մոտ կես միլիոն մարդ վերաբնակեցրեց Հայաստանի նորակառույց Տիգրանակերտներում, հին քաղաքներում (Արտաշատ, Արմավիր, Երվանադաշատ, Զարիշատ և այլն):

Նորաբնակները, որոնք հելլենիստական մշակույթի կրողներ էին, նպաստեցին Հայաստանում քաղաքային կյանքի զարգացմանն ու աշխուժացմանը, հելլենիստական մշակույթի տարածմանը: Դրա ավանդույթները թափանցեցին սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակույթի բոլոր բնագավառների, նույնիսկ պահպանողական այնպիսի ոլորտի մեջ, ինչպիսին թաղման ծիսակատարությունն է:

Տիգրանակերտը անտիկ աղբյուրներում ներկայացվում է որպես շքեղ կառուցված, խոշոր և հարուստ քաղաք: Պլուտարքոսն ասում է, որ «Տիգրանակերտը լի էր գանձերով և աստվածներին նվիրաբերված թանկարժեք ընծաներով, քանզի մասնավոր անձինք և մեծատոհմիկները, ցանկանալով հաճոյանալ թագավորին, միմյանց հետ մրցում էին քաղաքի շենության ու ընդարձակման համար»<sup>24</sup>: Տիգ-

<sup>19</sup> Memn., XVI, LVI; App., Mithr., XII, 85.

<sup>20</sup> Խաչատրյան Օ., Հելլենիստական քաղաքաշինության որոշ ավանդույթների, Երազանույն վայրի և Դվին քաղաքի հիմնադրման մասին [Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ Լրաբեր) 1987, N 2, էջ 53-54]:

<sup>21</sup> Մովսես Խորենացի, II, 49:

<sup>22</sup> App., Mithr., 84.

<sup>23</sup> Strabo., XI, 14, 15.

<sup>24</sup> Plut., Lucul., XXVI.

րանն ամեն կողմից մեծ թվով հույն դերասաններ<sup>25</sup> էր հավաքել իր հիմնադրած թատրոնի բացման հանդիսավոր արարողության համար: Այս տեղեկություններից հետևում է, որ Տիգրանակերտը կառուցվել է նախապես մտածված միասնական ընդհանուր հատակագծով, ինչպես Արտաշատ մայրաքաղաքը, Ջարիշատը<sup>26</sup> և այլն: Հնարավոր է՝ հիպոտամյան համակարգով, որը բնորոշ էր հելլենիստական քաղաքներին: Տիգրանակերտում կառուցվել են պալատական և վարչական շենքեր, ավագանու գեղեցիկ բնակարաններ, տաճարներ, որոնց նվիրաբերվել են թանկարժեք ընծաներ: Մովորաբար մայրաքաղաքում էին գտնվում գլխավոր աստվածների տաճարները, այսինքն, Անահիտին ու Արեգ-Միհր-Ապոլոնինը՝ ինչպես Արմավիրում, Արտաշատում, Վաղարշապատում: Տիգրանակերտում եղել է նաև անտիկ թատրոն (ամֆիթատրոն): Այսպիսով, Տիգրանակերտում իրենց արտահայտությունն են գտել հելլենիստական, առաջին հերթին՝ սիրիական քաղաքաշինության լավագույն ավանդույթները: Տիգրանակերտը պետք է լիներ ավելի գեղեցիկ ու շքեղ, քան Անտիոքը, քանի որ ինչպես հելլենիստական քաղաքաշինության գիտակ Վ. Չերիկովերն է ասում, միանգամից ուզում էր ունենալ այն ամենը, ինչ մյուս քաղաքներում ստեղծվել էր երկարատև գոյության ընթացքում<sup>27</sup>:

Տիգրանակերտի հաջորդ հիշատակությունը կապված է մ.թ. I դ. կեսերին հայկական գահի շուրջ՝ պարթևների և հռոմեացիների միջև ծավալված պայքարի հետ: Պարթևների թագավոր Վաղարշը, հարձակվելով Հայաստանի վրա, դուրս է քշում Հռոմի դրածո Հռադամիզդին և գահը հանձնում իր եղբայր Տրդատին: Ինչպես Տակիտոսն է ասում, «Արտաքսատա և Տիգրանակերտ քաղաքներն ընդունում են նրա հպատակությունը»<sup>28</sup>: Հռոմեացիները չեն հանդուրժում հայկական գահի կորուստը, և Ներոնի՝ կայսր դառնալուց հետո (51-68 թթ.) սենատը արևելք է ուղարկում Կորբուլոնին (55 թ.): Վերջինս, Փոքր Ասիա գալով, Սատաղից շարժվում է դեպի Արտաշատ: 58 թ. տիրանում է Արտաշատին: 59 թ. ավերելով և հրդեհելով քաղաքը՝ շարժվում է դեպի Տիգրանակերտ: Ճանապարհին պատգամավորներ են գալիս Տիգրանակերտից ու Կորբուլոնին հայտնում, որ «քաղաքի պարիսպները բաց են, և քաղաքացիները սպասում են հրամանի»<sup>29</sup>, և ոսկե սպասք են նվիրում նրան:

Հայկական գահի համար Ներոնը Հայաստան է ուղարկում Տիգրանին, որը Կապադովկիայի թագավոր Արքելայոսի թոռն էր և երկար ժամանակ Հռոմում պատանդ էր: Տիգրանը՝ որպես «Մեծ թագավոր Հայոց Մեծաց» (60-61 թթ.), մայրաքաղաք է դարձնում Տիգրանակերտը, որովհետև Արտաշատն ավերված էր, բացի այդ, Տիգ

<sup>25</sup> *Plut., Lucul., XXIX.*

<sup>26</sup> **Խաչատրյան ժ. Դ.**, «Արքունի քաղաք Ջարիշատի» տեղադրությունը (*Էջմիածին, 2006, սեպտեմբեր, էջ 77-84*):

<sup>27</sup> **Tscherikover V.** *Die hellenistischen Städtegründungen von Alexander dem Grossen bis auf die Römerzeit* ("Philologus Supplement band XIX", Heft I, Leipzig, 1927, S. 199).

<sup>28</sup> **Tacit. Annales, XII, 50.**

<sup>29</sup> *Նույն տեղում, XIV, 23, 24:*

րանակերտը մոտ էր Միրիային: Այդ կապակցությամբ Տակիտոսն<sup>30</sup> ասում է, որ Տիգրանակերտը հզոր պարիսպներ ուներ, շրջապատված էր բավականին լայն Նիկեփորիոն գետով, իսկ այնտեղ, որտեղ Նիկեփորիոնը հուսալի պահպանություն չէր ապահովում, հսկայական խանդակ էր փորված. ինչպես թերակղզու վրա կառուցված Արտաշատ մայրաքաղաքի պարագայում, որի պարիսպները շուրջանակի պատում էր գետը, բացի պարանոցից, որն Արտաշեսը շրջափակել էր փոսով և պատնեշով<sup>31</sup>: Տիգրանակերտի պարսպի վրա եղել են արտելքներ կատարելու դռնակներ<sup>32</sup>: Այսինքն, Տիգրան Մեծը, Պոմպեոսի հետ կնքած հաշտության պայմանագրից հետո, վերականգնել է Լուկուլլոսի ավերած քաղաքը, անառիկ ու գեղեցիկ, ինչպես ինքը ի սկզբանե էր նախատեսել:

Մի տարի հետո պարթևներն ու հռոմեացիները համաձայնության են գալիս, որ երկու երկրների գորքերը հեռանան Հայաստանից: Կորբուլոնը Տիգրանակերտից հետ է կանչում Տիգրան Վեցերորդին պաշտպանող լեգեոններին և գահընկեց անում նրան: Արածանիի ափին, Հռանդեայում հայ-պարթևական գորքերից գորավար Պետոսի կրած խայտառակ պարտությունը և 62 թ. կնքված հաշտության պայմանագիրը նպաստեցին հայկական գահի հարցի լուծմանը: Այսինքն՝ Տրդատը դառնալու էր Մեծ Հայքի թագավոր, բայց թագը ստանալու էր Ներոնից<sup>33</sup>: Տրդատը, Հռոմում թագադրվելով Ներոնից, փող ու վարպետներ է բերում և վերականգնում ավերված Արտաշատ մայրաքաղաքը, Գառնի ամրոցը և այլն:

Տիգրանակերտի մասին հաջորդ տեղեկությունը վերաբերում է Տրդատ Երրորդ Մեծի<sup>34</sup> ժամանակաշրջանին: Դա Տիգրանակերտի՝ կրաքարերից կառուցված պարիսպների վեց դարպասներից մեկի՝ հյուսիսային ձախ կողմի պատի ճակատին, շարվածքի տարբեր մասերում տեղադրված<sup>35</sup> քարերի վրայի հունարեն արձանագրությունն է (նկ. 1): Այն պատմում է քաղաքացիների՝ թագավորի դեմ բարձրացրած ապստամբության մասին: Տիգրանակերտի ավերման մասին վկայում է Փ. Բուզանդը: Եպիփանը «Անցաներ և յերկիրն Աղձնեաց, լուսաւորէր և գնոսա և լնոյր զերկիրն Աղձնեաց վաներով, և շինէր վկայանոց մի յավանին ի քաղաքին Տիգրանակերտի, և յօր յիշատակի սրբոցն ի փրկութիւն և ի բարեխօսութիւն աշխարհի»<sup>36</sup>:

364-368 թթ. Շապուհ Երկրորդը հարձակվում է Հայաստանի վրա և մյուս քաղաքների թվում ավերում է նաև Տիգրանակերտը, գերեվարում 40.000 ընտանիք: Փավստոս Բուզանդն ասում է. «Եւ առին

<sup>30</sup> Նույն տեղում, XIV, 4-6, 8:

<sup>31</sup> Strabo, XI, 14,5.

<sup>32</sup> Tacit. Annales, XV, 4.

<sup>33</sup> ՀԺՊ, I, էջ 740-762:

<sup>34</sup> Սարգսյան Գ. Խ., Տեղալական հասարակարգի հաստատումը Հայաստանում և հին հայկական պետության անկումը (ՊԲՀ, 1972, N 2, էջ 225):

<sup>35</sup> Тревер К. В. Очерки по истории культуры древней Армении (II в. до н. э. - IV в. н. э.), М.-Л., 1953, с. 283-288, табл. 88-89.

<sup>36</sup> Փավստոսի Բիզանդացու Պատմութիւն Հայոց, V, 27 (բնագիրը՝ Բ. Պատկանյանի), Ե., 1987:

աւերեցին զմեծ քաղաքն Տիգրանակերտ, որ էր ի գավառին Աղձնեաց յիշխանութեան բղէշխին, քառասուն հազար երդ, զայն նոյնհետայն ի գերութին խաղացուցին»<sup>37</sup>:

Իսկ Մովսէս Խորենացին հաղորդում է, որ Շապուհ Երկրորդին առաջին գրոհի ժամանակ չի հաջողվում գրավել Տիգրանակերտը: Նա հարձակվում է երկրորդ անգամ: «Եւ Յունացն մատուցեալ մեծաւ բռնութեամբ յեցուցին ի պարիսպն զկոչեցեալ Էշսն: Եւ է այս գործի մեքենայից անուաւոր, յերից երից արանց մղելով տարեալ, և ի ներքուստ կացնովք և սակրօք երկրերանովք և կտցաւոր մրճովք՝ փորել զհիմունսն: Եւ նգախարխար արարեալ զայն, որ ի հայկազնոյն Տիգրանայ հոծեալ և յարմարեալ որմունքն, քակեալ ընկեցին. և հուր ի դրունսն և յամենայն կողմանսն վառեալ, և քարինք և նետք և տեգք արձակեալք լինէին... Այլ յունականն ձեռն ի քթթել ական հրձիգ առնէր զամենայն փայտակերտսն: Շապիոյ զմնացեալսն ի կոտորածէն գերեալ՝ չուէ ի Պարսս...»<sup>38</sup>:

Տիգրանակերտը Հայաստանի երկրորդ խոշոր քաղաքն էր: Ուստի, ի տարբերություն մյուս քաղաքների, ավելի շատ է հիշատակվում օտար և հայկական աղբյուրներում: Գագիկ Սարգսյանը կարծում է, որ մ.թ.ա. 69 թ. Տիգրանակերտը կարող էր ունենալ 100 հազար բնակչություն<sup>39</sup>: Ըստ Պլուտարքոսի, Տիգրանակերտը այդ ժամանակ «վիթխարի քաղաք» էր<sup>40</sup>, Փավստոս Բուզանդը, խոսելով Շապուհ Երկրորդի կողմից Հայաստանի քաղաքներն ավերելու մասին, նշում է «Տիգրանակերտ մեծ քաղաքը»<sup>41</sup>, որտեղից Շապուհը 40 հազար ընտանիք է գերեվարում: Այսինքն, Տիգրանակերտը եղել է ծաղկուն, բազմամարդ, մեծ քաղաք: Գործուն մասնակցություն է ունեցել Հայաստանի քաղաքական և տնտեսական, մշակութային կյանքին: Ունեցել է դրամահատարան: Նշեցինք, որ առ այսօր Տիգրանակերտի տեղադրության հարցում հստակություն չկա: Տեսակետներից ամենահավանականը Լեման Հաուպտինն է: Տեղանքի և քաղաքի շինությունների նկարագրությունը, պարիսպները (նկ. 2, 3), վեց հիասքանչ կամարաձև դարպասներով, որոնցից արևմտյանը և հյուսիսայինը Արտաշատ տանող ճանապարհի կողմում են, կառուցված են կրաքարե զանգվածներից: Հնարավոր է՝ պալատական, տաճարական շինությունները, ամֆիթատրոնը, վերնախավի բնակարանները նույնպես կառուցված են եղել կրաքարերով, որը բնորոշ է հելլենիստական շրջանի ճարտարապետությանը: Այդ առումով կարևոր է նաև հունարեն արձանագրության առկայությունը: Ցավոք, կառույցների շինարարական տեխնիկայի և ամֆիթատրոնի մասին Լեման Հաուպտը և մյուսները չեն նշում: Քանի որ Մեծ Հայքի քա-


<sup>37</sup> Նույն տեղում, IV, 24:

<sup>38</sup> Մովսէս Խորենացի, III, 28:


<sup>39</sup> Plut., Lucul., XXV.

<sup>40</sup> Саркисян Г. Х. Тигракеерт, М., 1960, с. 61.

<sup>41</sup> Փավստոս Բուզանդ, IV, 24:



Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3

դաքներում և նույնիսկ Արտաշատ մայրաքաղաքում ամֆիթատրոն չի եղել: Մինչդեռ դա այնքան կարևոր փաստ է, որ Տիգրանակերտի տեղորոշման հարցում կարող է լուրջ կրված դառնալ: Այնուամենայնիվ, վերջնական պատասխանը կարող են տալ պեղումները:



**СТОЛИЦА ТИГРАНАКЕРТ**

ХАЧАТРЯН Ж. Д., АКОПЯН Н. Ф.

**Резюме**

Политический, экономический и культурный подъем явился основой усиления могущества Армении в III-I вв. до н. э. Поэтому не случайно в период царствования Тиграна II (95-55 гг. до н. э.) Армения вышла на широкую международную арену, став одной из могущественных стран Передней Азии. Тигран построил в Ахдзнике столицу новой империи – Тигранакерт (конец 80-х гг. до н.э.), расположенный, согласно многим источникам, в районе верхнего течения р. Тигр. По другим же данным, Тигранакерт был локализован к северу от р. Тигр, некоторые же полагают, что столица находилась к югу от р. Тигр. На наш взгляд, из существующих точек зрения наиболее вероятной является версия Леманн Гаупта. Описание местности и города, ворота, стены, строительный камень (известняк) характерны для архитектуры эллинистического периода. Немаловажным фактором является также наличие греческой надписи на одной из башен, однако окончательный ответ могут дать лишь археологические раскопки.